ՕՐԱՎԱՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՂԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ

Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի տնտեսական կենցաղում հնագույն ժամանակներից մինչև XX դարի առաջին քառորդը, երկրագործական զբաղմունքների պահանջմունքներից ելնելով, կիրառության մեջ է եղել օրավար մակերեսի չափի միավորը։

Հայ գրավոր աղբյուրների մեջ[1] (XIII դարի առաջին քառորդ —XVIII դարի վերջ) վանքերին նվիրված հողատարածությունները, առքի և վաճառքի դրված հողերը, կոռային աշխատանքները արտահայտված են օրավարով։ Սակայն հայ միջնադարյան աղբյուրները չեն բացահայտում օրավարի բուն չափերը և նրա բաղկացուցիչ մասերը։

XIX դ. ուսումնասիրողները, արխիվային, դաշտային, ազգագրական նյութերը հավաստում են, որ Հայաստանում օրավար վարելահողի մակերեսի չափը հնուց արդեն վերացական միավոր էր, սակայն նրա դրսևորումները տարբեր գոտիներում գործնականում տարբեր էին։

Աղբյուրները, հատկապես «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» *ժողովածուի հեղինակները, որոնք ուսումնասիրել են Արևելյան Հայաստանը 1884—1886 թթ., մի շարք արժեքավոր տեղեկություններ են տալիս գյուղատնտեսական գործիքներով (արոր, գութան) վարելու աշխատանքային օրվա տևողության մասին, ընդ որում տարբեր վայրերում այն սկսվում էր տարբեր ժամերի, նայած զբաղմունքի տեսակին՝ կապված աշխարհագրական պայմանների և աշխատանքային ժամանակի նկատմամբ մշակված սովորության հետ։*

XIX դարի վերջին քառորդին Ա. Երիցյանը գրի է առել Ղազախի գավառի Թովուզ-Կալե հայկական գյուղում պահպանված մի օրվա վարի հնագույն ինքնատիպ բաժանում։ Նա հավաստում է, որ այստեղ մի օրավարը բաժանվում էր երկու ճաշի, մեկ ճաշը՝ երկու եզան, մեկ եզը՝ երկու կիսաեզան կամ պճեղի, վերջապես, մեկ պճեղը հավասար էր 15 ֆունտ ցորենի և համարվում էր ամենափոքր միավորը[2]։

Օրավարի բաժանումները տարբեր շրջաններում դրսևորվել են տարբեր ձևերի մեջ, մտցնելով յուրահատկություններ, որոնց համար հարուստ նյութեր են տալիս դաշտային ազգագրական հետազոտությունները։ Այսպես՝ Գուգարքի շրջանում մեկ օրավարը բաժանվում էր երկու ճաշի կամ չորս գլխի (կոտի), իսկ մեկ ճաշը՝ երկու գլխի (կոտի), վերջապես, մեկ գլխի մեջ ամփոփվում էր 25 գրվանքա ցորեն[3]։ Օձուն (Ուղունլար) գյուղում տարբերությունը այն էր, որ մեկ օրավարի չորրորդ մասն անվանում էին շարեք[4]։

Բերված նյութերից երևում է, որ հայ երկրագործի ժամանակի և դրա բաժանումների մասին հղած պատկերացումները կապված էին երկրագործական օրվա բաժանումների (ճաշ, գլուխ) և երկրագործության մեջ աշխատող անասունների (եզ, կես պճեղ, պճեղ) հետ։

---

1 *Տե՛ս* Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 123, 137 և հտ.։* Ս. Ջ ա լ ա լ յ ա ն, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս. 1842, էջ 17, 21, 31, 41, 94, 99 և հտ.։ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9165, էջ 1ա—8բ։* Ա շ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, *Ժամանակագրություն Ստեփանոս Օրբելյանի, Երևան, 1942, էջ 44։* Լ. Խ ա չ ի կ յ ա ն, *Տնտեսական գործարքների մասին դրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, էջ 36—37։*

2 *Տե՛ս* А. Е р и ц о в, Экономический быт государственных крестьян Казахского уезда Елизаветпольской губернии, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края». Тифлис, 1886, т. II, ч. 3, *էջ 65—66։*

3 *ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության սեկտորի արխիվ, № 36 տետր։ Այս նյութերը, ինչպես նաև հետագայում նշվածները մենք հավաքել ենք 1965—66 թթ. գիտարշավների ժամանակ։ Այսուհետև՝ ազգագրության սեկտորի արխիվ։*

4 *Նույն տեղում։*

Գրավոր և դաշտային ազգագրական նյութերը հաստատում են, որ Հայաստանի տարբեր շրջաններում հայ շինականը մշակել էր աշխատանքային օրվա տևողության կարգը և դրա բաժանումները։ Այդ կարգը ճշտորեն իրագործվում էր երկրագործության մեջ պայմանավորված համայնքային փոխօգնությունից բխող անհրաժեշտությամբ։

XIX դարի վերջի և XX դարի սկզբի ուսումնասիրողները օրավարի տևողությունը արտահայտել են ժամանակով, այն է՝ վեր են ածել տվյալ ժամանակաշրջանում ընդունված ժամանակի չափերի միավորների։ 1864—65 թթ., ըստ Ս. Զելինսկու, Շիրակում գութանավարի աշխատանքային օրը սկսվում էր գիշերվա 2—3-ին և շարունակվում մինչև առավոտյան 11—12-ը, որից հետո 3—4 ժամ հանգստանում էին ու շարունակում աշխատանքը, ավարտելով այն մայրամուտից մի փոքր առաջ, որը կազմում էր 11—12 աշխատանքային ժամ[5]։

1966 թ. հունիս-հուլիս ամիսներին Շիրակի տարբեր գյուղերում մեր հավաքած նյութերը որոշ ճշգրտումներ մտցրին Ս. Զելինսկու հիմնականում հավաստի տեղեկության մեջ։ Այսպես, երբ աշխատանքային օրը ավարտվում էր, գութանավորները տեղափոխվում էին հաջորդ վարելիք արտը։ Այդ ժամանակ գործնական տեսակետից նպատակահարմար էր 2—3 տոկոս վարել, որպեսզի գիշերը հեշտ լիներ գութանը գործի գցելը։ Երկրորդ՝ ճաշի հանգստից բացի (կեսօրին) կային նաև կարճատև դադարներ։ Ակրաստին (առավոտյան) հանգստանում էին մոտ մեկ ժամ, իսկ գիշերը և արևամուտից առաջ՝ 20-ական րոպե։ Բացի դրանից, ժամանակի մասին տեղացիների պատկերացումները կապված էին երկրագործական մեկ օրվա ցիկլի, երկնային լուսատուների, ինչպես նաև թռչունների կանչի հետ[6]։

Ս. Զելինսկու տվյալները հիմնականում համընկնում են Հայաստանի հարթավայրային և նախալեռնային բարենպաստ տեղանք ունեցող շրջաններին։ Այդ հաստատվում է Ա. Խան-Աղյանի 1884—1885 թթ. Էջմիածնի և Սուրմալուի գավառների, ինչպես նաև Հ. Մալխասյանի՝ 1900-ական թթ. Ջավախքի բերած տվյալներով[7]։

Այսպիսով, դաշտային և նախալեռնային այն շրջաններում, որոնք հիմնականում հացատիկային էին և ունեին բարենպաստ տեղանք, գութանավարը սկսվում էր գիշերը և տևում մինչև մայրամուտ։ Այդպես էր Արաքսի հովտում, Շիրակում, Ջավախքում, Կարսում, Փամբակում, Լոռիում, Ղազախում և այլուր։

Հիմնականում լեռնային և մասամբ նախալեռնային շրջաններում աշխատանքային օրն ըստ կրկսվում էր առավոտյան։ Այս տեսակետից հետաքրքիր են Ս. Զելինսկու՝ Զանգեզուրի մասին գրած տողերը, ուր հեղինակը հայտնում է, որ, ի տարբերություն այլ շրջանների, այստեղ գիշերները չեն վարում։ Վարն սկսվում էր վաղ առավոտյան, տևում մինչև մայրամուտ, կեսօրին երկուսից-երեք ժամ հանգստի ընդմիջումով[8]։ Սյունեցիներից բացի, որոնց մասին արդեն նշվեց, գիշերները վար չէին կատարում նաև նախիջևանցիները, սասունցիները, մոկացիները և ուրիշներ[9]։

Գրավոր և դաշտային նյութերը հավաստում են, որ գարնան ու աշնան վարի աշխատանքային օրվա տևողությունը տատանվում էր 7—9, ամռանը՝ 12—14 ժամի սահմաններում։

XIX դարում փաստագրված հայ երկրագործի աշխատանքային օրվա տևողությունը դարերով մշակված նրա աշխատանքային սովորության արտահայտությունն էր, որի հիմքում ընկած էր մարդու և բանող ուժի ծախսված միջին աշխատուժը։

XIX դ. Հայաստանում թե՛ գութանը, թե՛ արորը հիմնականում տեղական էին՝ տարբեր մեծության, փայտյա և ամուր, զանգվածեղ ու ծանր, իսկ XIX դարի II կեսին Էջմիածնի, Սուրմալուի, Նոր-Բայազետի, Երևանի, Բորչալուի, Ղազախի շրջաններում սկսում են մուտք գործել

---

5 Տե՛ս С. Зелинский Экономический быт государственных крестьян в Шораге-ле Александропольского уезда Эриванской губернии, «Материалы...», Тифлис, 1885, т. I, էջ 36։

6 Ազգագրության սեկտորի արխիվ, № 37 տետր։

7 Հ. Մալխասյան, Հայ գեղջուկի ալբոմ (Ջավախք), Ազգագրական հանդես, գիրք 3, Թիֆլիս, 1898, էջ 365։ А. Хан-Агов, Экономический быт государственных крестьян Эчмиадзинского и Сурмалинского уездов Эриванской губернии, «Материалы...», Тифлис, 1886, т. III, ч. 1, էջ 309։

8 С. Зелинский, Экономический быт государственных крестьян Зангезурского уезда Елизаветпольской губернии, «Материалы...», Тифлис, 1886, т. IV, ч. 1, էջ 53, 79։

9 Ազգագրության սեկտորի արխիվ, № 36 տետր։

գործարանային մեծ և փոքր գութանները[10]։ Բանող ուժի քանակը և տեսակը տեղական զանգվածեղ գութանի համար տարբեր շրջաններում տարբեր պատկեր է ներկայացնում[11]։ Հայաստանում արորին սովորաբար լծել են 1—2 զույգ եզ կամ մեկ զույգ գոմեշ։ Ուրեմն օրավարի հարաբերական անկայունությունը կախված էր նաև աշխատանքային գործիքից, քաշող ուժի քանակից և տեսակից։

Օրավար հասկացողության որոշիչ հանգամանքներ են եղել նաև հողի տեսակը և ամրության աստիճանը, տեղանքը, բնակլիմայական պայմանները, այլ խոսքով՝ այն բնա-աշխարհագրական միջավայրը, որտեղ կատարվել է աշխատանքը։

Օրավարի՝ վարելահողի մակերեսի չափի դրսևորումները, թեև ոչ շեշտված ձևով, բայց հիմնականում համընկնում են Հայաստանի աշխարհագրական գոտիների հետ, այն է՝ հարթավայրային, նախալեռնային և լեռնային։ Ուստի, հարցի քննությունը դյուրացնելու համար նպատակահարմար ենք համարում պայմանականորեն ընդունել այդ բաժանումները և դրանք քննել առանձին-առանձին։

XIX դարի վերջին քառորդին, Ֆ. Մարկովի հավաստմամբ, Երևանի գավառում գութանի մեկ օրվա վարի արդյունքը 2/3 դեսյատին է եղել (0,7283 հեկտար)։ Գութանով այդքան կարելի է վարել, ինչպես հեղինակն է նշում, կրկնավարի դեպքում[12], կատարելագործված գութանով, 5—7 զույգ եզ լծած, այն էլ, հավանաբար, այդ գավառի բարենպաստ տեղանքում (ցածրադիր սևահողային մասերում), մինչդեռ նախալեռնային շրջաններում (Կրբուլախ են), ինչպես հաստատում են դաշտային նյութերը, մեկ օրվա գութանավարը 1/2 դեսյատինից (0,5464 հա) չէր անցնում[13]։ Նույնն էր նաև Ղազախի գավառի հարթավայրերում և մասամբ նախալեռնային մասերում, որտեղ գութանավարը 1/2-ից հասնում էր 2/3 դեսյատինի[14], այդպես էր նաև Ղարաբաղի հարթավայրային շրջաններում[15]։ Էջմիածնի և Սուրմալուի գավառներում մեկ օրավար հողի տարածությունը չէր անցնում 1/2 դեսյատինից, այսինքն՝ 1000—1200 քառ. սաժեն էր[16] (0,5280—0,5464 հա)։ Այդ բացատրվում է հողի տեսակի և բանող ուժի քանակի տարբերությամբ։ Եթե Երևանի, Ղազախի, Ղարաբաղի հարթավայրային շրջաններում հողը կավախառը սևահող էր, ապա Էջմիածնի և Սուրմալուի շրջաններում կավահող էր, որը դժվարացնում էր հերկելը։ Բացի դրանից, Էջմիածնի և Սուրմալուի հարթավայրային շրջաններում լծում էին 4—5 զույգ եզ, իսկ մյուս հարթավայրային շրջաններում (որտեղ օրավարի տարածությունը մեծ էր)՝ 5—7 զույգ եզ։

Փաստերը ցույց են տալիս, որ հարթավայրային, ինչպես նաև բարենպաստ տեղանք ունեցող նախալեռնային շրջաններում վարելահողի օրավար մակերեսի չափի մեծությունը տատանվում էր 1/2—1/3 դեսյատինի սահմաններում։ Այդպես էր Արաքսի հովտում և նրան հարող նախալեռնային հարթ մակերևույթ ունեցող վայրերում, ինչպես նաև Ղազախի, Ղարաբաղի, Էջմիածնի և Սուրմալուի հարթավայրային և նախալեռնային բարենպաստ տեղանք ունեցող շրջաններում։

Հայաստանի մեծ մասը զբաղեցնում է նախալեռնային գոտին։ Ուստի հետաքրքիր է քննել օրավարի արտահայտություններն այդ գոտում՝ անտառային և անտառազուրկ մասերում, ինչպես նաև լեռնային գոտու նախալեռնայինին հարող շրջաններում։

1840—1842 թթ. Փամբակի անտառային շրջանի պետական գյուղացիների ծխամատյաններում ցանովի հողատարածությունները հաշվված են օրավարով։ Պարզվում է, որ Փամբակի շրջ-

---

10 Ф. Марков, Экономический быт государственных крестьян Эриванского уезда Эриванской губернии, «Материалы...», т. III, ч. 1, էջ 88, 89, 300; т. IV, ч. 2, էջ 42 և հտ.։

11 Х. Вермишев, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1887, т. IV, ч. 1, էջ 234—236։

12 Ф. Марков, նշվ. աշխ., էջ 89։

13 Ազգագրության սեկտորի արխիվ, № 36 տետր (հավելված)։

14 А. Ерицов, նշվ. աշխ., էջ 65։

15 А. Беконский, Экономический быт государственных крестьян Шушинского и Джебраильского уездов Елизаветпольской губернии, «Материалы...», Тифлис, 1886, т. IV, ч. 1, էջ 239։

16 А. Хан-Агов, նշվ. աշխ., էջ 309։

ջանի գյուղերում երկու օրավարը հավասար էր մեկ դեսյատինի[17]։ Բացառություն է կազմում միայն Ուռուտ գյուղը, որտեղ չորս օրավարը հավասար է մեկ դեսյատինի[18]։

Արխիվային վավերաթղթերում եղած օրավարի չափը հաստատվում է հետագա ուսումնասիրողների կողմից։ Ա. Երիցյանը 1884—85 թթ. ուսումնասիրելով Բորչալուի գավառի տնտեսությունը, որը նախկին Փամբակի շրջանի մեջ էր մտնում, հավաստում է, որ այդ գավառի հարթավայրային մասերում, որտեղ հողը չրարբի էր, մեկ օրավարը 1/2 դեսյատին էր, իսկ Լոռու և Թեղերի շրջաններում՝ 1600 քառ. սաժեն[19] (0,7283 հա)։

1884—85 թթ. համար Ա. Երիցյանը Բորչալուին կից Ղազախի շրջանի 43 հայկական գյուղերից վերցրած տվյալների հիման վրա եկել է այն համոզման, որ այդ գավառի գյուղերում օրավարը հավասարվում էր 1600 քառ. սաժենի[20], իսկ կային գյուղեր, որտեղ մեկ օրվա գութանավարը սակավ ինչ պակաս էր, երբեմն՝ ավելի։ Հին Դիլիջանում, օրինակ, ինչպես նաև գյուղերի մեծ մասում, գութանի մեկ օրվա վարը 1600 քառ. սաժեն էր, մինչդեռ Ճամբարակում այն հավասար էր 1200 քառ. սաժենի (0,5464 հա), Թովուզ-Քյանդում և Թովուզ-Կալեում՝ 800 քառ. սաժենի[21] (0,3642 հա)։ Այստեղ նկատելի է օրավարի նվազում, որը պետք է բացատրել թեր հարթության անտառային մասերում բուսարմատների առատությամբ, գործիքի ծանրությամբ և միաթև վարի կիրառմամբ։

Մեր կողմից 1965 թ. այդ շրջաններում հավաքած դաշտային ազգագրական նյութերը մեծ մասամբ հաստատում են գրավոր վկայությունները։

XIX դարի վերջին Ս. Զելինսկին, ուսումնասիրելով Շիրակի (Շորագյալի) 128 գյուղերից 65-ը, հաստատում է նախալեռնային ծառազուրկ շրջաններում օրավարի մեծության մասին եղած տվյալները։ Նա հաղորդում է, որ Շորագյալում գութանով մեկ օրում վարում էին մոտ 1/2 դեսյատին[22]։ Անիի, Ախուրյանի և Ամասիայի շրջաններում 1966 թ. մեր հավաքած դաշտային նյութերը հավաստում են Ս. Զելինսկու հաղորդած փաստերը, միայն որոշ գյուղերում օրավարի տարածությունը 1/2 դեսյատինից փոքր ինչ ավելի է ստացվում։

Նախալեռնային գոտու անտառազուրկ շրջանների օրավարի մեծության մասին հիմնավոր տվյալներ են բերում նաև Կ. Սադովսկին և Հ. Մելիքասյանը։ Նրանք պնդում են, որ Կարսի մարզում և Ջավախքում մեկ օրավարը 1/2 դեսյատին էր[23]։

Այսպիսով, նախալեռնային գոտում, ինչպես նաև լեռնային գոտու նախալեռնային հարող շրջաններում օրավարի մեծությունը տատանվում էր 1/2 դեսյատինի սահմաններում։ Այդպես էր Շիրակում, Լոռիում, Ղազախում, Բորչալուում, Կարսում և այլուր։ Հայաստանի լեռնային շրջաններում օրավար վարելահողի մակերեսի չափը ավելի պակաս է։ Լեռնային շրջաններից մեկի՝ Զանգեզուրի մասին հավաստի տվյալներ են հաղորդում Ս. Զելինսկին և Մելիք-Շահնազարյանը։ Ս. Զելինսկու տվյալներով, 1880-ական թթ. Զանգեզուրում գութանի մեկ օրվա վարի արդյունքը չէր անցնում 1/4 դեսյատինից[24]։ Մելիք-Շահնազարյանի հաղորդմամբ Արծվանիկ գյուղում մեկ դեսյատին վարելու համար անհրաժեշտ էր երկու և ավելի օր[25]։

Ս. Եղիազարյանի այն հաղորդումը, թե Զանգեզուրում մեկ օրավարը մոտ 1/2 դեսյատին էր[26], չափազանցված է, քանի որ նախ՝ լեռնային շրջաններում օրավարի տեղությունը պակաս էր, քան նախալեռնային կամ հարթավայրային շրջաններում, բանող ուժը և գութանի տեսակը

---

17 Հայկական ՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, էջ 184—580։

18 Նույն տեղում, էջ 482։

19 А. Ерицов, Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, «Материалы...», Тифлис, 1887, т. VII, էջ 403։

20 Նույն տեղում, էջ 403։

21 Նույն տեղում։

22 С. Зелинский, նշվ. աշխ., հատ. I, էջ 36, 63—64։

23 К. Садовский, Краткие заметки Карсской области, «Сборник материалов для описаний местностей и племен Кавказа», Тифлис, 1883, вып. 3, отд. I, էջ 329; Հ. Մելիքասյան, նշվ. աշխ., էջ 364—365։

24 С. Зелинский, նշվ. աշխ., т. IV, ч. 1, էջ 120։

25 А. Мелик-Шахназаров, Село Арцваник, «Сборник материалов для описаний местностей и племен Кавказа», вып. 25, Тифлис, 1898, отд. II, էջ 23—42։

26 С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, Казань, 1890, ч. 1, էջ 177։

այստեղ քիչ արտադրողական էր, այնուհետև՝ վարը կատարվում էր մեծ մասամբ միաթև թեք հարթություններում, ուր հողը քարոտ էր և, վերջապես, այլ հեղինակներ ևս պնդում են, որ այդ շրջանում օրավարի մեծությունը չէր անցնում 1/3 դեսյատինից (0,3641 հա), ինչպես Նախիջևանի շրջանի արևմտյան մասերում, որի մասին հաղորդում է Ն. Նիկիֆորովը[27]։

Այսպիսով, Հայաստանի լեռնային շրջաններում, մյուսների համեմատությամբ, օրավարի չափը ավելի նվազ էր կապված նրա մեծության վրա ազդող գործոնների հետ։

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները և օրավարի կոնկրետ դրսևորումները, դժվար է համաձայնել այն հեղինակների հետ, որոնք «օրավարը հանորոշ» մեծություն են համարում, որոնց թվում են Ի. Շոպենը, Ն. Իվանենկոն և այլք[28]։ Սակայն օրավար վարելահողի մակերեսի չափը հարաբերական մեծություն է, քանի որ նրա որոշիչները նույնպես հարաբերական մեծություններ են։

Հայաստանի տնտեսությունն ուսումնասիրողները բացարձակացրել են օրավարի մեծությունը։ Այսպես, Ի. Շոպենը և Կ. Օրլովսկին հաղորդում են, որ 1829—30-ական թթ. Արևելյան Հայաստանում օրավարի մեծությունը մոտ մեկ դեսյատին էր[29] (մոտ 1,0925 հա)։ Սակայն նրանց տված այդ թվերը չեն համապատասխանում նախալեռնային և լեռնային գոտիներում կիրառված օրավարի մեծությանը, իսկ հարթավայրային շրջանների համար այն մեծացված է, ուստի պետք է օգտագործել միայն վերապահությամբ, մասնավոր դեպքերի համար, իսկ Արևելյան Հայաստանի նկատմամբ, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ փաստերը, այն չի համապատասխանում տարբեր աշխարհագրական գոտիներում կիրառված օրավարի կոնկրետ արտահայտություններին։

XIX դարին և XX դարի առաջին քառորդին վերաբերող գրավոր և դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ օրավար մակերեսի չափին զուգահեռ գործում էին նաև այլ չափեր, որոնք ավելի կոնկրետացված էին՝ կապվելով երկրագործական գործիքների հետ։ Այսպես, Հայաստանի տարբեր շրջաններում (Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք և այլն) օրավարին հոմանիշ էին գութան, գութանավար, կրոավար մակերեսի չափ արտահայտող անվանումները, որոնք նշանակում էին մեկ օրվա գութանի հերկած տարածությունը։ Սակայն մակերեսային չափի արտահայտումը աշխատանքային գործիքներով և այդ չափի հավասարությունը օրավարի հետ դրսևորվել է կոնկրետ ձևով, կապված աշխարհագրական գոտիների հետ։

Օրավար վարելահողի մակերեսի չափը նախապես կիրառվել է արորի համար։ Պատմական զարգացմամբ այն անցել է գութանին և հաշվարկվել նրա համար, սակայն XIX դ. եղած արորի օրավարը նույնպես հետաքրքրություն է ներկայացնում և հնարավորություն է տալիս գոնե մոտավոր պատկերացում ստանալու ավելի վաղ օգտագործված արորավարի մոտավոր չափի մասին։ Արորավարը հետևյալ պատկերն է ներկայացնում[30]։

Շրջանի անվանումը	Տարածութ.	Բանող ուժի քանակը	Ժամանակակից չափերը
Ախալցխայի և Ախալքալաքի գավառ	1/2 դես. ?	1—2 զույգ եզ	0,5464 հա
Ալեքսանդրապոլի գավառ	1/4 դես.	1—2 զույգ եզ	0,2732 հա
Նոր-Բայազետի գավառ	1 դես. ?	1—3 զույգ եզ	1,0925 հա ?
Սրեանի գավառ	1/5 դես.	2 գ. եզ կամ 1 գ. գոմեշ	0,2149 հա
Էջմիածնի գավառ	1/5 դես.	2 գ. եզ կամ 1 գ. գոմեշ	0,2149 հա
Սուրմալուի գավառ	1/3 դես.	2 գ. եզ կամ 1 գ. գոմեշ	0,3642 հա
Նախիջևանի գավառ	1/4 դես.	1—2 գ. եզ կամ 1—2 գ. գոմեշ	0,2732 հա
Լաղահի գավառ	1/4—1/5 դես.	» » »	0,2732—0,2149 հա
Մեղրու շրջան	1/5 դես.	1 զույգ եզ	0,2149 հա

[27] Н. Никифоров, Экономический быт государственных крестьян западной части Нахичеванского уезда Эриванской губернии, «Материалы...», т. I, էջ 560։

[28] И. Шопен, Исторические помятники состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, էջ 887; В. Иваненко, Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого князя Михаила Николаевича, Тифлис, 1901, էջ 226։

[29] И. Шопен, նշվ. աշխ., էջ 887; К. Орловский, Кавказский календарь на 1851 г., էջ 9։

[30] Այս աղյուսակը վերցրել ենք Խ. Վերմիշևի աշխատությունից (տե՛ս Х. Вермишев, նշվ. աշխ., էջ 234—236), ավելացնելով ժամանակակից չափերը։

Օրավար հասկացությունը օգտագործվում էր ոչ միայն որպես վարելահողի մակերեսի, այլև այգիների տարածությունների չափ[31]։ Այգիների տարածությունը օրավարով արտահայտելը կապված է եղել, հավանաբար, այն նույն տեղի մինչև այգի գցելը արտատեղ լինելու հանգամանքի հետ (թեև այգիները հաշվել են նաև ծառերի և թփերի քանակով) և կամ, ըստ երևույթին, հայերի մեջ, որպես երկրագործ ժողովրդի, ընդունված է եղել այգու տարածությունը օրավար մակերեսի չափի միավորով արտահայտելը։

Մինչև XX դարի սկիզբը օրավարի չափը որոշելու համար ամենատարածված միջոցներն էին քայլով, շղթայով, պարանով, ակոսների քանակով և այլ միջոցներով չափելը։ Հետաքրքիրն այն է, որ պետության ներկայացուցիչների կողմից կատարված չափումների համար, որտեղ օրավարն արտահայտված է պետական միավորներով (ոաժեն, դեսյատին), հիմք են հանդիսացել տեղական ժողովրդական չափի միավորները։ Այսպես, ըստ Ա. Երիցյանի, Քարվանսարա և Հին Դիլիջան գյուղերում մեկ թոկի երկարությունը և լայնությունը 100 քառակուսի ոաժեն էր, իսկ 16 թոկը համարվում էր մեկ օրավար[32]։

Մեկ օրվա վարի տարածությունում ցանվելիք հացահատիկի քանակությամբ մակերեսի չափի որոշումը ընդհանուր երևույթ էր ողջ Հայաստանի համար և գալիս էր հին շրջանից։

XIX դարի վերջի և XX դարի սկզբի տվյալները հաստատում են, որ օրավար մակերեսի չափը անմիջական առնչություն է ունեցել ժամանակի, ծանրության համա-չարեքային սիստեմի և հատկապես հացահատիկի չափերի հետ։ Այդ փոխհարաբերությունը տարբեր գավառներում դրսևորվել է զանազան ձևերով՝ կապված ժամանակի մասին եղած տեղական պատկերացումների և գործող կշռային միավորների հետ (օրինակ, Ղազախում մեկ օրավարը=2 ճաշի=4 պճեղի=5 ֆանեֆ=120 ֆունտ ցորենի, իսկ Լոռիում՝ 2 ճաշի կամ 4 գլխի—120 ֆունտ ցորենի կամ=2 ճաշի (4 գլխի)=1600 քառ. սաժենի=4 կոտի=100 գրվանքայի)։ Օրավարի բաժանումները մի կողմից կապված էին երկրագործի աշխատանքային օրվա բաժանումների (ճաշ, գլուխ են), մյուս կողմից բանող ուժի (եզ, պճեղ են) հետ։

Այսպիսով, ոչ միայն ռազմական և աշխատանքային գործիքները (նետ-նետաձիգ, նետընկեց, նիզակ, նիզակաբոյ, բահ են), ամանները (կոտ, կարես, փառչ են) և մարդու մարմնի մասերի հիման վրա ստեղծված չափերը (թիզ, գիրկ, քայլ, կանգուն են) հարստացել են, ստանալով նոր բովանդակություն և կիրառվել նոր ասպարեզում, այն է՝ վեր են ածվել երկարության, ծավալի և ծանրության միավորների, այլև երկրագործական գործիքը (գութան) և բանող ուժը (եզ, պճեղ) դարձել են մակերեսի և ժամանակի չափի միավորներ։ Այս չափերի մեծ մասը գալիս է նախնադարյան շրջանից և XX դարում հանգես գալիս մնացուկային ձևով։

---

31 Հայկական ՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 93, ցուցակ 1, գործ 13, էջ 1։

32 А. Ерицов, նշվ. աշխ., էջ 65—66։